ՀՀ տարածքային
կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն

Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC

ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ՏԵՍԱՆԵԼԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

4

Պատումներ և հայացք Հայաստանի համայնքներից

ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ
ՏԵՍԱՆԵԼԻ ԶԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Պատումներ և հայացք Հայաստանի համայնքներից

4

Երևան, 2022

Ծրագրի մասին

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի նպատակն է ամրապնդել Հարավային Կովկասի հանրային հաստատությունների կարողությունները՝ մատուցելու ավելի որակյալ քաղաքացիակենտրոն ծառայություններ: Ծրագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ազգային, շրջանային և տեղական մակարդակներում գործող գործընկեր հաստատություններին խորհրդատվություն է տրամադրում ազգային բարեփոխումների նախագծման և իրականացման, ընդհանուր պայմանների բարելավման և ստանդարտների ու ուղեցույցների մշակման վերաբերյալ: Այն օժանդակում է առավելապես տեղական մակարդակում քաղաքացիակենտրոն ծառայությունների մատուցման գործում առանցքային դերակատարների կարողությունների զարգացմանը:

Տեղական զարգացման գործընթացներում քաղաքացիների մասնակցությունը խթանելու նպատակով Ծրագիրն աջակցում է մասնակցության և բողոքարկման մեխանիզմների ներդրմանը և դրանց վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության բարձրացմանը:

Ծրագիրն աջակցում է նաև շրջանային և տեղական տնտեսական զարգացման ռազմավարությունների և գործիքների մշակմանն ու կիրառմանը:

Գերմանիայի Կովկասյան նախաձեռնության շրջանակներում Ծրագիրը նպաստում է Հարավային Կովկասի երկրների միջև մասնագիտական գիտելիքի և փորձի փոխանակմանը:

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիրը «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում ծրագրի» շարունակությունն է: Այն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ և Հայաստանում համաֆինանսավորվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) կողմից:

Ծրագիրն իրականացվում է հիմնական քաղաքական գործընկերոջ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) հետ սերտ համակարգմամբ:

Հրատարակության մեջ առկա տեսակետներն անպայմանորեն չեն արտացոլում ԳՄՀԸ, ՇԶՀԳ և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

Պիեռ Բոնիֆասի

Հայաստանյան թիմի ղեկավար

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիր

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն

Դեռևս 2015 թվականին Հայաստանն ուներ տեղական ինքնակառավարման խիստ հատվածական համակարգ՝ ավելի քան 900 համայնքով, որոնք զգալիորեն տարբերվում էին իրենց չափսերով, կարողություններով և ֆինանսական ռեսուրսների բաշխմամբ: Այս համայնքներից շատերում տեղական իշխանությունները դժվարանում էին իրականացնել նույնիսկ իրենց հիմնարար գործառույթները, ինչը հաճախ հանգեցրել է քայքայված հանրային ենթակառուցվածքների, իսկ տեղական ներուժը չի բավարարել եկամուտներն ավելացնելու և սոցիալ-տնտեսական զարգացում ապահովելու համար:

Մի քանի տարվա ընթացքում իրականացվող վարչատարածքային բարեփոխումների արդյունքում 2021 թվականի տարեվերջին Հայաստանի համայնքների թիվը կրճատվեց միավորման մի շարք գործընթացների շնորհիվ:

Նախկին 915 համայնքները կազմեցին 72 բազմաբնակավայր միավորված և յոթ «ինքնուրույն» համայնք՝ մեկտեղելով իրենց կարողությունները, ռեսուրսները և ի հայտ բերելով իսկապես աննախադեպ հնարավորություններ տեղական տնտեսական զարգացման, ներդրումների ներհոսքի, բարձրորակ հանրային ծառայությունների մատուցման և քաղաքացիների արդյունավետ մասնակցության համար:

Հայաստանի վարչատարածքային բարեփոխման գլխավոր նպատակը տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համար և

նպաստավոր միջավայրի ստեղծումն էր տեղական մակարդակում այնպիսի կենսունակ կառույցների ձևավորումը, որոնք կօգնեն համայնքներին առավելագույնս արդյունավետորեն ծառայել իրենց բնակչությանը: Նոր հիմնված՝ «մեկ պատուհան» սկզբունքով գործող Քաղաքացիների սպասարկման գրասենյակները, թերևս, կառուցվածքային և կազմակերպական փոփոխությունների ամենաշոշափելի և ամենատեսանելի օրինակներն են:

Այստեղ հնարավոր է դարձել մեկտեղել տեղական բնակչության առօրյան դյուրացնող մեծ թվով նորարարական լուծումներ:

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիրը շարունակում է աջակցել միավորված համայնքներին՝ բարելավելու իրենց կառավարչական կարողությունները և առանցքային գործառույթների իրականացումը համապատասխանեցնելու նոր պահանջներին: Ավելին, միավորված համայնքներում էլեկտրոնային կառավարման նորարարական գործիքների ներդրման և ՔՍԳ-ների հիմնման միջոցով ծրագիրը կնպաստի համայնքային վարչարարության արդիականացմանը և ծառայությունների մատուցման կատարելագործմանը:

Ծրագրային բյուջետավարման օգնությամբ համայնքները կարող են առավել հեշտությամբ և արդյունքահեն ձևով կառավարել իրենց ծախսերը և դրանց վերաբերյալ դյուրըմբռնելի տեղեկություններ տրամադրել իրենց բնակչությանը: Արդյունքում, տեղական մակարդակում հանրային միջոցների օգտագործումն ավելի թափանցիկ և հաշվետվողական կլինի:

Համայնքներն առաջնային օղակ են նաև տեղական տնտեսական զարգացման համար: Պլանավորման կարողությունների զարգացումը միավորված համայնքներին հնարավորություն կտա մշակել տնտեսական զարգացման իրատեսական ռազմավարություններ, սահմանել առաջնահերթություններ և հատկորոշել տեղական ներդրումային ծրագրերի իրականացման նպատակային ոլորտներ:

Ծրագիրը նաև աջակցում է տեղական մակարդակում կին քաղաքական գործիչների կարողությունների հզորացմանը՝ այդպիսով նպաստելով որոշումների կայացման գործընթացում կանանց դերի բարձրացմանը:

Այս գիրքը Ձեզ կտանի Հայաստանի տարբեր վայրեր և կներկայացնի համայնքների արձանագրած հաջողության պատմությունները, որոնք հնարավոր են դարձել քաղաքացիամետ միջամտությունների շնորհիվ: Գրքի վերնագիրը հուշում է, որ իմաստալից արդյունքները հեշտությամբ չեն տրվում. դրանց կարելի է հասնել ու պահպանել միայն քայլ առ քայլ՝ տարբեր շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավման և շարունակական նվիրման, պետական և տեղական իշխանությունների միջև արդյունավետ համագործակցության ու գործընկերության և միջազգային դոնորների ու զարգացման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների համատեղ աջակցության միջոցով:

Այս հրապարակումը մեկտեղել է հաջողության պատմությունները, տեղական մակարդակում որոշում կայացնողների ու համայնքային մարմինների աշխատակիցների հանրային հայտարարությունները, ինչպես նաև սեփական փորձով կիսվող քաղաքացիների կարծիքները վերջին փոփոխությունների արդյունքում իրենց համայնքում տեղի ունեցած դրական տեղաշարժերի մասին:

Հաճելի ընթերցում:

Ալավերդի

Հայաստանի հյուսիսում՝ Երևանից մոտ 170 կմ հեռավորության վրա, իր չնաշխարհիկ բնությամբ տարածվում է Լոռու մարզի Ալավերդի միավորված համայնքը:

Համայնքով է անցնում հանրապետության երկաթուղային հաղորդակցության գլխավոր երակը՝ Երևան-Թբիլիսի երկաթգիծը, գլխավոր մայրուղիներից մեկը՝ Երևան-Վանաձոր-Ալավերդի-Թբիլիսին, ինչպես նաև՝ Հայաստանի ամենաջրառատ Դեբեդ գետը:

Ալավերդի համայնքի մակերեսը մոտ 300 քառ. կմ է: Ռելիեֆին բնորոշ են տարբեր մակարդակի բարձրություններ՝ 750-1700 մ, և խիստ մեծ թեքություններ: Ալավերդի միավորված համայնքն ընդգրկում է Ալավերդի (այդ թվում՝ Ակներ, Սանահին գյուղական թաղամասերը), Աքորի, Կաճաճկուտ, Հաղպատ, Ծաղկաշատ և Ջիլիզա բնակավայրերը:* Համայնքի կենտրոնը Ալավերդի քաղաքն է: Հիմնական բնակչությունը՝ մոտ 16,800:

Ալավերդին՝ թռչնի բարձրությունից

*Ալավերդի համայնքում նախատեսվում է վարչատարածքային բարեփոխումները շարունակել նաև 2022 թվականին

Համայնքի տարածքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Դրանց մեջ են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ներառված Սանահինի և Հաղպատի վանական համալիրները՝ կառուցված 10-13-րդ դարերում, ինչպես նաև Դեբեդ գետի վրա կառուցված Սանահինի պատմական Քարե կամուրջը:



Հաղպատի վանական համալիր

Սանահինի պատմական (Քարե) կամուրջ

Մշակութային հարուստ ավանդույթներ ունեցող Ալավերդին մոտ 600 տարի առաջ արդեն գրչության կենտրոն էր, իսկ 100 տարի առաջ թատրոն ուներ:

Ալավերդու քաղաքային թատրոնի ռեժիսոր Հրաչյա Պապինյանը նկատում է, որ ամենամյա «Լոռի» մշակութային փառատոնը իր հիմնման օրից՝ խորհրդային տարիներից, ոչ մի տարի չի չեղարկվել, իսկ ղեկավարների հարցում Ալավերդու բախտը բերել է. բոլորն էլ կարևորել են փառատոնը, թատրոնը, մշակույթը:

Հ. Պապինյանը Ալավերդու քաղաքային թատրոնի ռեժիսորն է

Ալավերդու քաղաքային թատրոնը պատրաստվում է «Լոռի» թատերական փառատոնին

«Դժվար է մեր համայնքապետարանի համար նման ծախս անելը՝ փառատոն, մշակույթ պահելը, դրանք շքեղություններ են համայնքի համար, բայց, բարեբախտաբար, մենք էլ կարողանում ենք դրսից միջոցներ, դրամաշնորհներ հայթայթել ու պահել թատրոնը, աշխուժացնել մշակութային կյանքը, մինչև որ մեր մայրաքաղաքային խմբերը կարողանան այնքան հնարավորություն ունենալ, որ հաճախ հյուրախաղերով այցելեն մարզեր, ինչպես խորհրդային տարիներին էր»,- ասում է Հրաչյա Պապինյանը:

Համայնքային աջակցությամբ մշտապես գործում է ոչ միայն թատրոնը, այլև Ալավերդու ժողովրդական գործիքների «Լազուր» համույթը:

Ալավերդու օդն ու միջավայրը ներծծված են մշակույթով. անգամ քաղաքի պաշտպանական ցանկապատերն են նկարազարդված թումանյանական ոգով:

Գեղանկարիչ Վարուժան Վարդումյանը նախկինում եղել է Ալավերդու գլխավոր նկարիչը: Այսօր Գեղարվեստի դպրոցի տնօրենն է: Նա իր քաղաքի կառավարման գործին մասնակցել է քաղաքի հենապատերը նկարազարդելու գաղափարով, ապա նաև՝ դրա իրականացմամբ: Մասնակցային կառավարումն այստեղ կարևորում են. ավագանին է հաստատել նրա ներկայացրած ծրագիրը և ֆինանսավորել այն:

Ալավերդի քաղաքի պաշտպանական ցանկապատերն են՝ նկարազարդված Վարուժան Վարդումյանի կողմից

Վարուժան Վարդումյանը տարբեր խնդիրների կողքին, որոնք լուծման ճանապարհին են, շատ կարևորում է համայնքում տարվող մշակութահեն դաստիարակության քաղաքականությունը. Մեր համայնքապետարանը բոլոր ժամանակներում մեծ ուշադրություն է դարձրել երեխաների արտադպրոցական կրթությանը. այս տարիներին երբեք չկանգնեցվեց Ալավերդու գեղարվեստի դպրոցի, երաժշտական դպրոցի, սպորտդպրոցների աշխատանքը: Ամեն գնով մեր համայնքապետարանը պահում է դրանք և, փա՛ռք աստծո, երեխաներն էլ, իրոք, այդ հաստատություններ սիրով են հաճախում: Այսինքն՝ ներդրումն արդարացված է»,- ասում է Վարուժան Վարդումյանը:

Ալավերդի համայնքում կա 15 հանրակրթական դպրոց, 12 նախադպրոցական հաստատություն, յոթ գրադարան, երկու արվեստի դպրոց, երկու երաժշտական դպրոց, երկու մարզադպրոց, մեկական նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություն:

Ալավերդի քաղաքի նորոգված և բարեկարգ սպորտդպրոցն է, որտեղ մարզվում են ողջ համայնքի մարզասեր երիտասարդները

Ավելին, Ալավերդին այն բացառիկ համայնքներից է, որտեղ նախակրթարաններից մեկում բացվել է ներառական սենյակ, և որն ունի հատուկ մասնագետ ու հոգեբան:

Ալավերդու Սանահին թաղամասի նախակրթարանն է

Սասուն Խեչումյանն է՝ Ալավերդի միավորված համայնքի ղեկավարը

Կտրտված ու բարդ ռելիեֆի պատճառով համայնքի թաղամասերն ու բնակավայրերը իրարից բավականին հեռու են: Համայնքի ղեկավար **Սասուն Խեչումյանը** դրանով է պայմանավորում նաև մանկապարտեզների թիվը.

«Եթե հիմա Ալավերդի քաղաքում ունենք յոթ մանկապարտեզ, բայց Ձիլիզայում չունենանք, որքան էլ այդ ծառայությունը որակյալ լինի, այն հասանելի չի լինի և նպատակին չի ծառայի Ձիլիզայում ապրող երեխայի համար: Ու ի՞նչ է ստացվում՝ եթե Ծաղկաշատում կամ Կաճաճկուտում՝ ծովի մակերևույթից 1,800 մետր բարձրության վրա, բարձրլեռնային գոտում է ապրում, նրա կրթվելու իրավունքը պետք է ոտնահարե՞նք, այդ դեպքում որտե՞ղ է սոցիալական արդարությունը: Այսինքն՝ մենք փորձում ենք նաև արդարությունը ապահովել»,- նկատում է համայնքի ղեկավարը:

Կարինե Եղինյանը Ծաղկաշատ բնակավայրի նախակրթարանի դաստիարակչուհին է

Ծաղկաշատ բնակավայրում, որն Ալավերդուց 12 կմ հեռու է, վերջերս բացվել է ժամանակակից նախակրթարան, իսկ մանկապարտեզ այս բնակավայրում չի եղել երբեք, անգամ խորհրդային տարիներին:

«Այսպիսի նախակրթարաններ համայնքում երեքն են՝ Ձիլիզայում, Կաճաճկուտում և մեզ մոտ՝ Ծաղկաշատում: Պայմանները շատ լավն են, համապատասխանում են ժամանակակից նախակրթարանի բոլոր չափանիշներին»,- ներկայացնում է Ծաղկաշատի նախակրթարանի դաստիարակչուհի Կարինե Եղինյանը:

Ծաղկաշատի նոր նախակրթարանը

Նախակրթարանի բակում կա նաև խաղահրապարակ, որտեղ երեխաներն անցկացնում են իրենց ակտիվ հանգիստը

Բարձրադիր այս բնակավայրում հեշտությամբ են լուծվում վարչարարական խնդիրները՝ գույքահարկի, հողի հարկի վճարման, տեղեկանքների ձեռքբերման հարցերը, քանի որ ամեն բնակավայր ունի մեկական օպերատոր, որոնք էլ պատասխանատու են բնակիչներին արագ և որակյալ ծառայություններ մատուցելու համար: Եթե քաղաքացուն տեղեկանք է անհրաժեշտ, ապա նա այս բարձրադիր բնակավայրից չի իջնում կենտրոն՝ համայնքապետարանում գործող Քաղաքացիների սպասարկման գրասենյակ: Այդ գործը նրա փոխարեն անում է բնակավայրի օպերատորը՝ դրանով թեթևացնելով բնակիչների հոգսը:

Հաղպատ բնակավայրի օպերատոր Լուիզա Մեհրաբյանն է

Լուիզա Մեհրաբյանը Ալավերդու համայնքապետարանի մասնագետ է,ապրում է Հաղպատում, աշխատասենյակը Հաղպատի վարչական շենքում է: Նա քաղաքացիներին տալիս է տեղեկանքներ, հավաքում հարկերը և շաբաթական երկու անգամ անձամբ տանում Ալավերդի, բանկում վճարում ու անդորրագրերը ներկայացնում համայնքապետարան:



Ալավերդի համայնքի Քաղաքացիների սպասարկման գրասենյակը

Համայնքապետարանի շենքում Քաղաքացիների սպասարկման գրասենյակը հիմնվել է համայնքի միավորման արդյունքում 2017 թվականին՝ Գերմանիայի, Շվեյցարիայի և ԱՄՆ կառավարությունների համաֆինանսավորմամբ: Գրասենյակը քաղաքացիներին մատուցում է բարձրորակ ծառայություններ «մեկ պատուհան» սկզբունքով՝ կիրառելով Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ):



Ալավերդի քաղաքի բնակիչ Էդիկ Բաբաջանյանը պատմում է, որ իրենց շենքի տանիքն արդեն նորոգել են

Էդիկ Բաբաջանյանն ապրում է Ալավերդի քաղաքի Սարահարթ թաղամասում: Պատմում է, որ իրենց թաղամասի շենքերի տանիքները կարկուտի, ձյան պատճառով տարիների ընթացքում լրիվ քայքայվել էին.

«Խոշորացումից հետո մարդիկ եկան, սարքեցին, հիմա նորմալ է, անձրևաջրերը տուն չեն լցվում, տանիքից չի կաթում, մի խոսքով՝ շնորհակալ ենք»:

Համայնքապետարանի աշխատակիցները նշում են, որ համայնքում առաջնահերթ լուծման կարիք ունի շենքերի տանիքների հարցը, իսկ Ալավերդի համայնքն ունի 185 բազմաբնակարան շենք:

Համայնքում իրականացվել են ասֆալտապատման, փոսալցման աշխատանքներ, իսկ LED լուսավորությունն այլևս շռայլություն չէ:

Ալավերդի բնակավայրում կառուցվել են հենապատեր, որոշ շենքերի վրա տեղադրվել են արևային ֆոտովոլտային կայաններ, նորոգվել է համայնքապետարանի դիմացի աստիճանավանդակը:

Միավորումից հետո Ալավերդի համայնքը ձեռք է բերել տեխնիկա, որով լուծվել է աղբահանության խնդիրը: Ամենօրյա ռեժիմով տեխնիկան դուրս է բերվում ավտոպարկից, նախատեսված ժամին՝ վերադառնում, լվացվում և կայանվում:

Աքորի բնակավայրի պատանիներն իրենց ժամանակն անցկացնում են «սմարթ» դասարանում:

Բնակավայրում նորացվել է ֆուտբոլի դաշտի ցանկապատը, կառուցվել է գերեզմանատան ցանկապատը, փողոցները լուսավորվել են: Անելիքներ, սակայն, դեռ կան:

Աքորիի մանկապարտեզը

Ցանցապատվել է Աքորիի ֆուտբոլի դաշտը

Աքորի բնակավայրի վերանորոգված «սմարթ» դասարանն է



Ալավերդի միավորված համայնքը գրեթե ամբողջությամբ ապահովված է գիշերային լուսավորությամբ:
Աշխատանքներն ընթացքի մեջ են:

Սանահինում գտնվող Միկոյանների թանգարանի մուտքը խորհրդանշող՝ Արտյոմ Միկոյանի հեղինակած ՄԻԳ ինքնաթիռը

Սանահինը զբոսաշրջային լուրջ կենտրոնի հավակնություններ ունի ոչ միայն հին վանական համալիրով, այլև Միկոյանների թանգարանով, որը հատուկ հմայք է հաղորդում պատմական բնակավայրին:

Հաղպատի բնակիչ Նաիրա Ղարդյանը հպարտ է, որ աշխատում է Հաղպատի վանքում: Նաիրան պատմում է համայնքի միավորումից հետո արված բարեփոխումների մասին.

«Խոշորացումից հետո Հաղպատում բազմաթիվ նկատելի դրական փոփոխություններ են եղել՝ վերականգնվել են ճանապարհները, անցկացվել է փողոցների լուսավորությունը, ինչը շատ կարևոր էր, քանի մեր գյուղը տուրիստական է համարվում: Այնպես էր լինում, որ հյուրանոցներից մարդիկ երեկոյան բարձրանում էին եկեղեցի, ու լույս չկար, հեռախոսի լույսով էին բարձրանում, իջնում:

Հիմա լուսավորությունը կա, գիշերը շատ ուշ են անջատում: Բոլորը խմելու ջուր ունեն տներում , մանկապարտեզը կա: Ամենակարևորը՝ տեխնիկա ունենք, առաջ դրսից էինք տրակտորը բերում, հիմա հնձիչ էլ ունենք, տուկ կապելու սարք ունենք, ինչը գյուղի համար բավականին մեծ բան է: Աղբի հարցն էլ, ի վերջո, լուծվեց, սա ամենակարևոր խնդիրն էր»:

Հաղպատի մանկապարտեզի խաղահրապարակն է

«Ալավերդու կառավարման գործում անհրաժեշտ է անհատական մոտեցում. ամեն բնակավայր ունի իր խնդիրը»,- ասում է համայնքի ղեկավար Սասուն Խեչումյանը:

Ավելի քան մեկ դար արդյունաբերական հսկա ներուժով կենտրոնն այսօր զարգացման այլ ուղղություն պետք է որդեգրի, համայնքի բնակավայրերն էլ զարգացման տարբեր տեմպեր են ունեցել: Այս առումով բարձրլեռնային բնակավայրը, որտեղ ավանդաբար զբաղվել են հողագործությամբ կամ անասնապահությամբ, զբոսաշրջային լուրջ կենտրոնների հավակնություն ունեցող Սանահինի կամ Հաղպատի հետ համեմատելն այդքան էլ տեղին չէ:

«Ուզում ենք՝ միասնական ուղղություն լինի, որով ռազմավարության մեջ մի դեպքում պատմամշակութային տուրիզմին զարկ տանք, մյուս դեպքում՝ էկո գյուղատնտեսական տուրիզմի զարգացմանը, ունենք նաև էքստրեմալ տուրիզմի զարգացման իրական հնարավորություն՝ ռաֆթինգ ենք անում, ճոպանուղի ունենք,այսինքն՝ ժամանակն է այս ուղղությունները զարգացնելու»,- ասում է համայնքի ղեկավարը:

Բարեկարգվել են Հաղպատ բնակավայրի ճանապարհներն ու մայթեզրերը

Սանահինի վանական համալիրը

Համայնքում ակտիվորեն ընթանում են ճանապարհների ասֆալտապատման, փոսալցման և բարեկարգման աշխատանքներ

Կառավարության և տարբեր միջազգային կազմակերպությունների աջակցությամբ, սուբվենցիոն ծրագրերով արված վերոնշյալ բարեփոխումները համայնքի ղեկավարը շատ կարևոր է համարում, բայց համայնքի զարգացման հարցում նա շեշտը դնում է կրթության և մշակույթի զարգացման վրա: Եվ ունի դրա հիմնավորումը.

«Ցանկացած ժամանակ մենք կհասցնենք ասֆալտ անել, տանիք վերանորոգել, բայց ամենամեծ ու կարևոր ներդրումը երեխայի վրա արված ներդրումն է. նույնիսկ մեր ընտանիքներում է այդպես: Եվ ես համոզված եմ, որ այն դաստիարակությունը, այն կրթությունը, որ մենք ակնկալում ենք տալ մեր երեխաներին, գուցե, օգնի նրանց ավելի լավ կառուցել մեր քաղաքը, քան մենք ենք անում: Եթե այսօր մեր բոլոր ռեսուրսները կենտրոնացնենք ասֆալտի, տանիքի, ճանապարհի վրա, իսկ վաղը այդ երեխաները՝ ապագա քաղաքացիները, պիտի վայելեն, դրա արժեքը չեն իմանա»,- ընդգծում է Ալավերդի համայնքի ղեկավարը:

Ալավերդու զարգացման վեկտորը փոխելու անհրաժեշտություն կա, քանի որ երբեմնի արդյունաբերական քաղաքի ծուխն ու աղմուկն այսօր փոխարինվել են շինարարական աղմուկով ու զբոսաշրջիկների աշխույժ անցուդարձով:

«Նախկին ենթակառուցվածքները, որ ստեղծված են եղել այժմ չգործող գործարանի համար և դրա շուրջ, կարող ենք օգտագործել տուրիզմի զարգացման նպատակով: Այս գործընթացը կարող է ցավոտ լինել, ժամանակատար, նույնիսկ՝ խոչընդոտներով լի. նոր մասնագիտացումներ, նոր որակավորումներ պահանջվեն, բայց հենց կարողանանք այդ փոփոխությունն իրականացնել, Ալավերդուն շատ խոստումնալից ապագա է սպասվում»,- ասում է Սասուն Խեչումյանը:

Աշոցք

Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմուտքում՝ Ախուրյան գետի վերին հոսանքի ավազանում՝ Երևանից 157 կմ հեռավորության վրա, տարածվում է Շիրակի մարզի Աշոցք միավորված համայնքը:

Այն իր մեջ ներառում է Աշոցք, Բավրա, Սարագյուղ, Թավշուտ, Սիզավետ, Ղազանչի, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար, Կրասար, Զույգաղբյուր և Կարմրավան բնակավայրերը:*

Համայնքը բարձրլեռնային է, տարածքի ամենացածր կետը ծովի մակերևույթից 1,968 մ բարձրության վրա է, իսկ առավելագույնը՝ 3,196 մ: Մշտական բնակչությունը կազմում է մոտ 7,600 մարդ: Հիմնական զբաղմունքներն են անասնապահությունը, դաշտավարությունը, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակումը:

Համայնքը հյուսիսից սահմանակից է Վրաստանին: Աշոցքով է անցնում Գյումրի-Նինոծմինդա (Վրաստան) միջպետական ավտոճանապարհը:

*Աշոցք միավորված համայնքը ձևավորվել է 2016 թվականին, իսկ արդեն 2021 թվականի տարեվերջից վերամիավորվել է Սարապատ համայնքի հետ: Բայց դրանով ոչ մի կերպ պակաս հետաքրքիր և հիշատակման արժանի չեն դառնում մեր հերոսները, նրանց բնակավայրերն ու պատմությունները:

Պետրոս Մելիքյանի օրը սկսվում է Մեծ Սեպասար բնակավայրի իր փոքր հողակտորը մշակելով: Դաշտավարության բրիգադավարից՝ գյուղապետ՝ անցած ճանապարհ, որ թույլ է տալիս նրան անել դատողություններ այսօր իրականացվող բարեփոխումների մասին և համեմատություններ անցկացնել ներկայի ու նախկինի միջև:

«Էն ժամանակ, երբ ես գյուղապետ էի, ֆինանսական միջոցները սուղ էին, պետական բյուջեի հնարավորություններն էլ՝ սահմանափակ: Այսօր մեծ արտոնություններ ու հնարավորություններ են տրված, և ֆինանսները կարող են նպաստել տարբեր սոցիալական և մշակութային ծրագրերի իրականացմանը»,- նկատում է Պետրոս Մելիքյանը:

Նա կարծում է, որ 2016 թվականին Աշոցք միավորված համայնքի ձևավորումը մեծապես նպաստեց մի շարք արմատական խնդիրների լուծմանը:

«Բարեփոխումները սկսվել են արտագնա արոտների ջրարբիացումից, ինչը շատ անհրաժեշտ է հատկապես մեր համայնքին: Դրա շնորհիվ այսօր ավելանում է կենդանիների և՛ կաթնատվությունը, և՛ մսատվությունը, ինչպես նաև լիարժեք օգտագործվում են հեռագնա արոտավայրերը»,- ասում է Պետրոս Մելիքյանը:

Պետրոս Մելիքյանը՝ Մեծ Սեպասարի իր փոքր տան շեմին՝ թոռների հետ

Խոշոր և մանր եղջերավոր անասուններն ամեն օր 10 կմ վերադառնում էին անասնագոմ, որպեսզի ջուր խմեին: Այսօր համայնքի ամբողջական ջրարբիացման հարցը լուծման փուլում է: Մասնագետների կարծիքով՝ եթե ջուրը բավարար է, յուրաքանչյուր կենդանին տալիս է առնվազն երկու, եթե ոչ երեք-չորս լիտր ավելի կաթ:

Այստեղ հոգացել են ոչ միայն կենդանիների, այլև կենդանապահների մասին. կառուցում են հովվի կացարաններ:

Աշոցքում կառուցում են խմոցներ, որոնք մեծապես կնպաստեն կաթնատվության և մսատվության աճին, ինչն էլ կհանգեցնի անասնապահության զարգացմանը:

Հովվի կացարանների կառուցումը Մեծ Սեպասարում

Ասֆալտապատվել են Աշոցքի որոշ փողոցներ.գործընթացը շարունակական է

Մեծ Սեպասարում սա համայնքի միավորման արդյունքում արված միակ բարեփոխումը չէ: Անցկացվել է խմելու ջրի ջրագիծ, լուծվել է լուսավորության հարցը:

«11 բնակավայրից իննում չի եղել գիշերային լուսավորություն, ինչն այսօր ապահովված է: Ավազակոպճային խառնուրդով հիմնանորոգվել են Մեծ Սեպասար և Սիզավետ բնակավայրերի ներհամայնքային ճանապարհները, ասֆալտապատվել են Աշոցք, Կրասար և Սիզավետ բնակավայրերի փողոցները»,- պատմում է Աշոցք միավորված համայնքի ղեկավար Կարեն Մանուկյանը:

Մինչև միավորումը համայնքի ճանապարհները գրեթե անանցանելի էին. այսօր թեկուզ գրունտային կամ երկրորդային ասֆալտով, բայց բարեկարգվել են: Իրականացվել է 230 մլն դրամ արժողությամբ շինարարություն:

Շուտով կլուծվեն նաև այլ կարևոր հարցեր՝ կտեղադրվեն հակակարկտային կայաններ, համայնքը կգազաֆիկացվի, կասֆալտապատվեն համայնքի մնացած հատվածները, կնորոգվեն համայնքային կենտրոնները, հին ջրագծերը կփոխարինվեն նորերով: Եվ այս ամենը Կառավարության սուբվենցիոն ծրագրերով:

Համայնքն ունի ֆուտբոլի դաշտ, որոշ շենքերի վրա տեղադրվել են արևային և ֆոտովոլտային կայաններ

Գյուղատնտեսական և կոմունալ տեխնիկայի ձեռքբերումն էապես թեթևացրել է բնակիչների հոգսերը

Ոռոգման համակարգի խնդիրը ևս միայն համայնքի միջոցներով՝ առանց պետական լուրջ աջակցության, հնարավոր չի լինի լուծել: Այսօր փորձում են ելքեր գտնել:
Համայնքը ձեռք է բերել տեխնիկա, որով բացի գյուղատնտեսական աշխատանքներից, լուծվում է նաև կանոնավոր աղբահանության հարցը:

Համայնքում հիմնականում Խորհրդային միությունից ժառանգություն մնացած տեխնիկա կար, որը շատ մաշված էր:

«Միավորման արդյունքում ձեռք ենք բերել գյուղատնտեսական նոր տեխնիկա, ինչը շատ կարևոր է: Ձնամաքրման աշխատանքների նպատակով կիրառվող տեխնիկան փրկություն է հյուսիսային այս համայնքի համար: Էքսկավատորը, բեռնատար մեքենան ու գրեյդերը անհրաժեշտ են համայնքի՝ հիմնականում գրունտային ճանապարհները բարեկարգելու համար, իսկ աղբատար մեքենայի ձեռքբերմամբ նախատեսում ենք կանոնավոր աղբահանություն կազմակերպել բոլոր բնակավայրերում: Այսօր միայն երկու բնակավայրում է իրականացվում՝ Աշոցքում և Ղազանչիում»,- ասում է համայնքի ղեկավար Կարեն Մանուկյանը:

Բավրայի բնակիչ Կորյուն Սումբուլյանը, ով նախկինում Բավրա համայնքի ղեկավարն է եղել, այսօր նկատում է համայնքում արված բարեփոխումները: Առաջինը մաքսատան տարածքից աղբահեռացման կանոնավոր աշխատանքներն են, ինչը մինչ միավորումը խնդիր է եղել: Մյուսը՝ ձյան մաքրման աշխատանքներն են կրկին մաքսատան հատվածում: Նա նաև կարծում է, որ համայնքների միավորումը պետք է նպատակային իրականացվի, որ արդարացնի իրեն.

«Ես կողմ եմ եղել համայնքների խոշորացմանը, բայց այն սկզբունքով, որ փոքր, ինքնուրույն գոյատևման հնարավորություն չունեցող բնակավայրերը միավորվեն, իսկ ինքնաբավ, խոշոր համայնքները, որ կարող են ինքնաֆինանսավորվել՝ մնան իբրև առանձին համայնքներ»:

Բավրայի բնակիչ Կորյուն Սումբուլյանն է

Համայնքում լուծվում է գիշերային լուսավորության հարցը

Ցանկապատվել է Աշոցք բնակավայրի գերեզմանատունը

Մեծ Սեպասարի բնակիչ Պետրոս Մելիքյանն էլ հավելում է.

«Եթե մի հինգ տարի հետ գնանք, կտեսնենք, որ մինչև համայնքի միավորումը գյուղացիները կարողանում էին մշակել իրենց հասանելիք հողերի միայն 40-60 տոկոսը: Այսօր 200 ընտանիք ընդհանուր առմամբ ամենաքիչը մինչև 400-500 հա ցանք է իրականացնում: Ու դա շնորհիվ պետական ու համայնքային աջակցության, ամեն ինչը ժամանակին և կանոնավոր կերպով իրականացման»:



Կրասարի բնակիչ Արարատ Կարապետյանին ամենից շատ ուրախացնում է գիշերային լուսավորությունը, ինչը բնակավայրում չի եղել երկար տարիներ: Նա նաև գոհ է համայնքապետարանի Միասնական սոցիալական ծառայությունների կենտրոնի գործունեությունից:

Աշոցք համայնքի Միասնական սոցիալական ծառայությունների կենտրոնի ավագ մասնագետ Մարգարիտ Միքայելյանը տեղեկացնում է, որ կենտրոն դիմում են ամենատարբեր խնդիրներով՝ կենսաթոշակային, նպաստների դիմումներից բժշկա-սոցիալական խնդիրներին վերաբերող հարցադրումներ, և Կենտրոնը «մեկ պատուհան» սկզբունքով մշտապես կարողանում է արագ լուծում տալ բնակիչների խնդիրներին:

Համակարգչային դասընթացը անցկացնելու համար, օրինակ, համայնքի ղեկավարությունը միությանը հատկացրել էր սենյակ՝ իր բոլոր հարմարություններով: Կատյան ընդգծում է՝ վստահում են իրենց, իսկ դա քիչ չէ գործի հաջողության համար:

Միությունը կազմակերպում է նաև ճամբարներ, մշակութային ու մարզական միջոցառումներ:

Հիմնականում անասնապահությամբ և անասնաբուծությամբ զբաղվող համայնքում որոշակի ակտիվություն ցուցաբերում են երիտասարդները՝ իրենց ծրագրերով նպաստելով համայնքի զարգացմանը: Կատյա Մարգարյանը Բավրայի երիտասարդական միության համակարգողներից է:

Միությունը երեք տարուց ավել է՝ գործում է և արդեն իրականացրել է տարբեր ծրագրեր: Առաջին ծրագիրը համակարգչային դասընթաց էր, որը ոչ միայն ծանոթացնում և համակարգչային հմտություններ էր փոխանցում երիտասարդներին, այլև համախմբող գործառույթ իրականացնում: Միությունը մշտապես աջակցություն է ստանում համայնքից ոչ միայն գաղափարները ողջունելու և տարբեր ծրագրեր իրականացնելու թույլտվության առումով, այլև դրանք իրականացնելու հնարավորություններ է ստեղծում:

Աշոցքը տարվա մեջ 156 օր ձնածածկ է, և հենց այս կլիմայական առանձնահատկությունը՝ երկար ու ցուրտ ձմեռները, ձմեռային զբոսաշրջության զարգացման համար հիանալի հնարավորություն է ընձեռում:

Դահուկային մարզաձևի սիրահարների համար այն անփոխարինելի վայր է: Աշոցքը միջազգային մրցաշարերում հաջողության հասած իր մարզիկների շնորհիվ դառնում է ճանաչելի:

Համայնքի ղեկավարը նկատում է՝ քանի որ իրենց մոտ զարգացած է դահուկավազքը, նաև տեսնում են սպորտային տուրիզմի զարգացման հեռանկար:

Բավրան Հայաստանի հյուսիսային դարպասներից է, ու շատ կարևոր է, որ Աշոցք համայնքում սկսված բարեփոխումները հետևողականորեն շարունակվեն, որպեսզի երիտասարդությունն իր ապագան տեսնի հենց իր համայնքում:

«Բոլորիս զարգացման և համայնքի առաջընթացի համար ամենակարևոր կորիզը երիտասարդներն են. եթե երիտասարդները լավ աշխատեն ու մնան իրենց բնակավայրերում, ես վստահ եմ՝ մեր համայնքը լավ ապագա կունենա»,- եզրափակում է մեր պատմության ամենաերիտասարդ ու լավատես մասնակիցը՝ Կատյա Մարգարյանը:

Մարմաշեն

Մայրաքաղաքից 135 կմ հեռավորության վրա՝ Շիրակի դաշտավայրում, ծովի մակերևույթից 1660 մ բարձրության վրա տարածվում է Մարմաշեն բազմաբնակավայր համայնքը:

Մայիսյան կենտրոնով 2017 թվականին միավորված համայնքը ներառում է Կապս, Վահրամաբերդ, Մարմաշեն, Հովունի, Քեթի, Փոքրաշեն, Հացիկ, Շիրակ, Ձաջուռ, Ձաջուռավան, Կարմրաքար, Լեռնուտ, Մեծ Սարիար, Կրաշեն բնակավայրերը:

Մշտական բնակչությունը մոտ 11,000 է: Հիմնականում զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակմամբ, անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, ինչպես նաև մեղվաբուծությամբ:

Մարմաշեն համայնքը՝ բարձրից

Մարմաշեն միավորված համայնքը ձևավորվել է 2017 թվականին, իսկ 2021 թվականի տարեվերջից վերամիավորվել է Ախուրյան համայնքի հետ: Բայց դրանով ոչ մի կերպ պակաս հետաքրքիր չեն դառնում հիշատկված անձինք, նրանց բնակավայրերն ու պատմությունները: Նյութի պատրաստման ուսումնասիրություններն ու հարցազրույցներն իրականացվել են 2021 թվականի ընթացքում:

Մեղուների հանդեպ սերն ու մեղվի հրաշագործ հատկությունները Մարտին Սարգսյանին վաղուց են կապել մեղվաբուծության և մեղրի արտադրության հետ:

Մարմաշեն համայնքի Մեծ Սարիար բնակավայրում տարիներ առաջ Մարտինն ուներ 33 փեթակ և արտադրում էր մեղր՝ երեք տեսակի փաթեթավորմամբ: Այդ սկզբնական կապիտալով որոշեց հիմնել բիզնես: Մտերիմները թերահավատ էին. վստահ էին, որ համայնքային կենտրոնից 15 կմ հեռավարության վրա գտնվող, վատ ճանապարհներով այդ բնակավայրում հնարավոր չէ բիզնես ունենալ:

Մարտինն իր գործունեությամբ ապացուցեց հակառակը. նրա կարծիքով՝ մարդիկ, տարիներ շարունակ բնության այդ պայմաններում՝ սոճիների հարևանությամբ ապրելով, արդեն չեն նկատում այն հրաշքը, որը կարող է ըստ արժանվույն գնահատել քաղաքի թոհուբոհից հոգնած մարդը, հովեկը կամ զբոսաշրջիկը:

«Եթե լինեն մարդիկ, ովքեր առանց երկմտելու կանեն ներդրում, կհիմնեն բիզնես՝ նրանք կհաջողեն»,- վստահեցնում է Մեծ Սարիար բնակավայրի բնակիչ, գործարար Մարտին Սարգսյանը:

Հյուրատուն Մեծ Սարիար բնակավայրում՝ Մարտին Սարգսյանի բիզնես նախագծերից մեկը

Այսօր Մարտինն ունի 120 մեղվաընտանիք, 24 տեսակի փաթեթավորմամբ մեղր և հյուրատուն: Բիզնեսն աշխատեց նաև այն բանի շնորհիվ, որ Մարմաշեն միավորված համայնքը սուբվենցիոն ծրագրերով լուծեց հաղորդակցային հարցեր՝ վերանորոգեց բնակավայր բերող ճանապարհը, վերացրեց ջրի, աղբահանության և լույսի բացակայության հարցը:

«Ցանկացած լավ կամ վատ բան անդրադառնում է այցելուի վրա. ինչքան կարողանանք ենթակառուցվածքներն արագ զարգացնել, այնքան դրա հետ կապված ոլորտները կարող են հավասարաչափ զարգանալ»,- ասում է Մարտինը:

Մարտինն ունի նոր նախագծեր և վստահ է, որ դրանք կիրականանան, քանի որ հստակ տեսնում է միավորված համայնքի զարգացման տեմպերը: Ամեն ինչ սկսվեց 2017 թվականին. 16 բնակավայր միավորվեց, և սկսվեց գույքագրման, խնդիրների վերհանման և համայնքի հավասարաչափ զարգացման ռազմավարության մշակման փուլը:

Կարեն Արշակյանը ղեկավարել է Մարմաշեն միավորված համայնքը 2018 թվականից մինչ վերջինիս միավորումն Ախուրյան համայնքի հետ

Մարմաշեն միավորված համայնքի (հեղ.՝ նախկին) ղեկավար Կարեն Արշակյանի համար թիվ մեկ խնդիրը կիրթ, դաստիարակված սերունդ ունենալն էր, և նա բարեփոխումների շղթան սկսեց մանկապարտեզներից: Նա պատմում է, որ համայնքի միավորումից առաջ միայն մեկ մանկապարտեզ կար Մայիսյանում՝ 28 երեխայից բաղկացած մեկ խմբով, ու վերջ:

«Այսօր Մայիսյանում գործում է արդեն 50-60 հոգուց բաղկացած երկու խմբանի մանկապարտեզ, ինչպես նաև չորս այլ մանկապարտեզ՝ Կապսում, Մարմաշենում, Ջաջուռում և Քեթիում՝ Կառավարության հետ համատեղ ֆինանսավորմամբ՝ սուբվենցիոն ծրագրերով»,- ներկայացնում է Մարմաշեն համայնքի ղեկավարը:

Քեթի բնակավայրի հիմնանորոգված մանկապարտեզն է

Կապս բնակավայրի նորոգված մանկապարտեզն է

Կապս բնակավայրում վերանորոգել են մանկապարտեզը, իսկ բնակավայրի դպրոցը ժամանակավորապես կգործի մանկապարտեզի շենքում, մինչև դպրոցի շենքն էլ նորոգվի:

Համայնքի միավորումից հետո մոտ 1 մլրդ դրամի շինարարական և այլ բնույթի մեծածավալ աշխատանքներ են կատարվել սուբվենցիոն և այլ ծրագրերով:

Մարմաշեն բնակավայրի նորոգված վարչական շենքն է

Լեռնուտ բնակավայրի այս շենքը փլուզման եզրին էր: Այսօր այն նորոգված է և կարող է օգտագործվել համայնքի կողմից:

Լեռնուտ գյուղում, օրինակ, վերանորոգվել է մի գեղեցիկ շենք, որը փլուզման եզրին էր, և որի վրա համայնքը ծախսել է 107 մլն դրամ: Ինչպես նշում են տեղի բնակիչները, եթե այս շենքը երկու տարվա ընթացքում չվերակառուցվեր, ապա համայնքն ունենալու էր երկու հարկանի անպիտան շենք, որն այլևս երբեք հնարավոր չէր լինի վերականգնել:

Նախատեսված է, որ արդեն նորոգված շենքում կլինեն մանկապարտեզ, համայնքային կենտրոն, երաժշտական խմբակ:

«Քանի որ Լեռնուտն կտրված է մայրուղիներից, հիմնական ճանապարհներից, մենք ուզեցինք կառուցել մի շենք, որը հույս կտա բնակիչներին ապրելու, երեխաներ ունենալու, նոր տներ կառուցելու, որ ոչ թե գյուղը լքեն, գնան, այլ մնան տեղում, արարեն, ստեղծեն»,- ասում է համայնքի ղեկավարը:

Լեռնուտում վերջապես լուծվեց նաև ջրի հարցը: Այստեղ թաղամաս է եղել, որ ընդհանրապես խմելու ջուր չի ունեցել:

«2019 թվականին մենք սարերի, ձորերի միջով մոտ 1 կմ երկարությամբ խողովակներ հասցրեցինք մինչև Լեռնուտ, այս տարի (2021 թ.՝ խմբ.) կավարտենք երկրորդ փուլը, ու այլևս Լեռնուտում ջրի խնդիր չենք ունենա»,- նկատում է Կարեն Արշակյանը:

Լեռնուտ բնակավայրի բնակիչ Աբրահամ Հարությունյանն է

Լեռնուտ բնակավայրի բնակիչ Աբրահամ Հարությունյանը որպես տխուր երազ է հիշում, թե ինչպես էր ամբողջ գյուղն օգտվում ջրի ընդամենը մեկ աղբյուրից:

«Միավորումից հետո մեր ամենացավոտ հարցը լուծվեց՝ ջուրն եկավ, հասավ մեզ»,- ասում է նա ու ոգևորված պատմում տարրական կենցաղային պայմանների մասին, որ վերջապես կարողացել են ստեղծել՝ լոգարան, տաք ու սառը ջուր և այլն:

Աբրահամ Հարությունյանը նկատում է, որ իրենց բնակավայրում բարեկարգվել և խճապատվել են ճանապարհներ, լուծվել է լուսավորության հարցը, նորոգվել է վարչական շենքի տանիքը:

Փոքրաշեն բնակավայրի բնակիչ Մարինե Մանուկյանը, բացի ջրի խնդրին լուծում տալուց, խիստ կարևորում է կոյուղագծի կառուցումը և ողջ համայնքում ճանապարհների բարեկարգումը.

«Երեխաները մինչև դպրոց էին հասնում, ցեխի մեջ կորում էին: Հետները շորեր էին տանում, որ փոխեն, մաքուր մտնեն դպրոց: Հիմա ճանապարհները բարեկարգվել են, ցեխը տուն չի մտնում»,- պատմում է տիկին Մարինեն:

Փոքրաշեն բնակավայրի բնակիչ Մարինե Մանուկյանն է

Միավորված համայնքը հոգում է նաև իր բնակիչների ազատ ժամանակը հարմարավետ անցկացնելու մասին: Փոքրաշենում նախկին փայտե տնակի փոխարեն գրասենյակ է բացվել, որտեղ երիտասարդներն ու տարեցներն անցկացնում են իրենց ժամանցը:

Հյուսիսային այս համայնքի համար ձմռանը տեղաշարժի հարցը լուրջ խնդիր է:

Բնակլիմայական պայմանների դեմ պայքարը հատուկ լուծումներ է պահանջում: Եվ ահա, միավորված համայնքի ջանքերով որոշակի լուծումներ գտնվում են:

Փոքրաշեն բնակավայրի վարչական շենքը նախատեսված է ծառայելու նաև իբրև համայնքային կենտրոն և երիտասարդների հավաքատեղի

Միավորված համայնքի ջանքերով ձեռք է բերվել տեխնիկա, որը «փրկություն» է համայնքի համար. ձմռանը մաքրում է ճանապարհների ձյունը, ամռանը՝ օգտագործվում գյուղատնտեսական աշխատանքների համար

«Տեխնիկայի ձեռքբերումը լավ հաշվարկի և տնտեսելու արդյունք էր»,- պատմում է համայնքի ղեկավարը:

Նախ դիմել են սուբվենցիոն ծրագրով երեք անուն տեխնիկա գնելու, ապա՝ խնայողությունների շնորհիվ համալրել տրանսպորտային պարկը:

Հովհաննես Մանուկյանը հերթական անգամ այլևս չմեկնեց արտագնա աշխատանքի միայն այն պատճառով, որ հայրենի համայնքում առաջացել էր տրակտորիստ-մեխանիկի թափուր հաստիք, և ինքը գերադասեց մնալ ընտանիքի կողքին և օգտակար լինել համագյուղացիներին:

Մարմաշենցի Հովհաննես Մանուկյանն է

Համայնքային հարստություն համարվող տեխնիկան պահվում է 520 քմ նորոգված ավտոպարկում: Սուբվենցիոն ծրագրով ձեռք են բերվել նաև հակակարկտային կայաններ, ու քանի որ կարկտաբեր ամպերը համայնքին հիմնականում սպառնում են Լոռուց և Ամասիայից, դրանք տեղադրվել են օղակաձև՝ փաստացի պաշտպանական օղակի մեջ վերցնելով համայնքը: Առաջիկայում ևս 15 հակակարկտային կայան ձեռք կբերեն:

Մարմաշենի նորոգված ավտոպարկն ու հակակարկտային կայանը

Սպասվող տեղումների, կանխարգելիչ միջոցառումների և համայնքին վերաբերող այլ գործընթացների մասին համայնքի բնակիչները կարող են տեղեկանալ իրենց համայնքային կայքից, որը ստեղծվել է Քաղաքացիների սպասարկման գրասենյակի բացվելուն զուգահեռ:

Տեղադրվել է նաև Համայնքային կառավարման տեղեկատվական միասնական համակարգը, որի շնորհիվ 16 բնակավայրերի բնակիչները իրենց հարցերի պատասխանները կարող են ստանալ՝ առանց համայնքային կենտրոն հասնելու, իրենց բնակավայրերի օպերատորների միջոցով կամ առցանց:

Մարմաշենի համայնքապետարանի Քաղաքացիների սպասարկման գրասենյակն է, որտեղ քաղաքացիներին մատուցվում են որակյալ ծառայություններ «մեկ պատուհանի» սկզբունքով

Արփինե Կարապետյանը Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարն է: Ներկայացնում է այն ծառայությունները, որոնք գրասենյակը մատուցում է քաղաքացիներին

Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արփինե Կարապետյանն ընդգծում է ՀԿՏՀ-ի կիրառման հիմնական դրական կողմը.

«Բնակիչները կարողանում են հենց տեղում՝ իրենց բնակավայրերում, հարցերը լուծել, օրինակ՝ տեղեկանք ստանալ՝ առանց հասնելու համայնքային կենտրոն, ժամանակի կորուստ չի լինում: Հարմար է, շատ լավ մտածված գաղափար»,- ասում է Արփինեն:

Կոլյա Գրիգորյանն՝ աշխատավայրում

Կոլյա Գրիգորյանը Ձաջուռ բնակավայրի օպերատորն է: Նա է հոգում իր բնակավայրի բնակիչներին տեղեկանքներով ապահովելու, ինչպես նաև վարձավճարները բանկում վճարելու, ապա՝ անդորրագրերը համայնքապետարան հասցնելու և այլ տեխնիկական հարցերը:

Մինաս Ավետիսյանի թանգարանում

Մինասի մեծադիր որմնանկարը պահպանվում է նաև համայնքի մյուս բնակավայրի՝ Վահրամաբերդի վարչական կենտրոնի շենքում՝ դրան հաղորդելով հատուկ հմայք:

Մինասի մեծադիր որմնանկարը՝ Վահրամաբերդի վարչական կենտրոնի շենքում

Մարմաշեն միավորված համայնքում նորոգվել են բազմաբնակարան շենքերի տանիքները

Ասֆալտապատվել են համայնքի որոշ բնակավայրերի փողոցները

Այս բնակավայրում էլ հսկայական աշխատանք է կատարվել. նորոգվել են բազմաբնակարան շենքերի տանիքները, խմելու և ոռոգման ջրի ցանցերը, տեղադրվել են ֆոտովոլտային արևային կայաններ, գիշերային լուսատուներ, աղբամաններ:

Նման աշխատանքներ արվել են բոլոր բնակավայրերում. Հացիկում կենդանիների մուտքը կանխելու նպատակով ցանկապատվել է գերեզմանատունը, նորոգվել է մշակույթի տունը, տանիքները, կառուցվել են ջրատարներ:

Համայնքում տեղադրվել են LED լուսարձակներ

Համայնքն ունի ֆուտբոլի հրաշալի դաշտ, որը մեծ ուրախություն է երեխաների համար: Եվ այս ամենը ձեռք է բերվել համայնքի միավորումից հետո, ինչը գիտակցում են համայնքի բնակիչները և նկատում, որ առաջ իրենց բնակավայրերը՝ հատկապես փոքրերը, այդքան հնարավորություն չունեին բարեփոխումների համար, իսկ այսօր արդեն միասնական բյուջեից անհրաժեշտ ծախսերն արվում են բոլոր բնակավայրերում:

Հացիկ բնակավայրում վերանորոգվում է մշակույթի տան տանիքը

Կենդանիների մուտքը կանխելու նպատակով ցանկապատվել է գերեզմանատունը

Ձաջուռի վերանորոգված մանկապարտեզն է

Համայնքի ղեկավար Կարեն Արշակյանը նկատում է.
«Եթե չլիներ համայնքների միավորումը, մենք չէինք ունենա նման ծրագրերից օգտվելու հնարավորություն՝ մինչև 100 մլն մեկ ծրագրի համար, որի 40-60 տոկոսն է միայն համայնքը վճարում: Մենք բնակավայր ունենք, որի բյուջեն ընդամենը 1 մլն դրամ էր, ու այդ տարածաշրջանում մենք 100 մլն ներդրում ենք արել»:

Շիրակ բնակավայրում շարունակվում են շինարարական աշխատանքները

Համայնքի ղեկավարը լավատես է և գոհ ընթացող աշխատանքների որակից ու ընթացքից. «Եթե այս տեմպով շարունակենք, բոլոր բնակավայրերում կունենանք մանկապարտեզ, վարչական կենտրոնի շենք, բոլոր բնակավայրերը կլինեն լուսավորված, ճանապարհները՝ խճապատված»:

Նրա լավատեսությունը կիսում է մեր պատմության գործարար հերոսը՝ Մարտին Սարգսյանը, ով պնդում է՝ ամեն ինչ կախված է նաև բնակիչներից. «Ես լավն եմ տեսնում և վստահ եմ,որ ամեն ինչ լավ է լինելու, մեծ ապագա ունի համայնքը»:

Մարմաշենի վանքն է՝ 10-րդ դարի բացառիկ կառույց, համայնքի տեսարժան և հոգևոր վայրերից մեկը

Ջերմուկ

Ջերմուկ միավորված համայնքը գտնվում է Հայաստանի հարավ-արևելքում՝ Երևանից 173 կմ, Վայոց Ձորի մարզկենտրոն Եղեգնաձորից՝ 50 կմ հեռավորության, իսկ ծովի մակերևույթից՝ 2080 մ բարձրության վրա գտնվող ոչ մեծ սարահարթում, որը երկու մասի է բաժանվում Արփա գետի կիրճով:

Համայնքը միավորվել է 2016 թվականին և ընդգրկում է Ջերմուկ, Գնդեվազ, Հերհեր և Կարմրաշեն (հեղ.՝ վերջին երկուսն արդեն Վայք համայնքի կազմում են) բնակավայրերը: Համայնքի կենտրոնը՝ Ջերմուկը, Հայաստանի երեք առողջարանային քաղաքներից մեկն է: Բնակչությունը 9,372 մարդ է: Գյուղական բնակավայրերի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակմամբ և պտղաբուծությամբ, իսկ Ջերմուկ քաղաքը առողջարանների և գեղատեսիլ վայրերի շնորհիվ զբոսաշրջային հայտնի կենտրոն է:

2021 թվականի տարեվերջի՝ համայնքների վերամիավորման արդյունքում Հերհեր ու Կարմրաշեն բնակավայրերը Ջերմուկից անջատվել ու կցվել են Վայք համայնքին: Նյութի պատրաստման ուսումնասիրություններն ու հարցազրույցներն իրականացվել են 2021 թվականի ընթացքում:

Քաղաքային զբոսայգու բարեկարգման աշխատանքներն ընթացքի մեջ են

Միավորումից հետո, ընդհանուր առմամբ, համայնքում կատարվել է ավելի քան կես միլիարդ դրամի կապիտալ ծախս, այդ թվում մոտ 200 մլն դրամի՝ սուբվենցիոն ծրագրերով: Ընթացքի մեջ են առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների աշխատանքները, մասնավորապես՝ Ջերմուկ համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների և մուտքերի վերանորոգումը, փողոցների ջրահեռացման ցանցի վերականգնումը և ասֆալտապատումը, ներբնակավայրային ճանապարհների, ինչպես նաև համայնքի քաղաքային զբոսայգու բարեկարգման աշխատանքները:



Ամբողջ համայնքում ընթանում են բակերի բարեկարգման, խաղահրապարակների կառուցման ու վերակառուցման աշխատանքներ:

Նոր վերանորոգված ֆուտբոլի դաշտն ու մանկական խաղահրապարակը

Ամենօրյա ռեժիմով իրականացվող մաքրման աշխատանքները Ջերմուկ համայնքի առօրյայի անբաժան մասն են կազմում

Առողջարանային քաղաքում օրն առողջ է սկսվում. ամեն առավոտ Ջերմուկի փողոցները մաքրվում են, ջրվում և ախտահանվում հատուկ միջոցներով: Ընդհանրապես, Ջերմուկ համայնքնայն բացառիկներից է, որտեղ աղբի խնդիրն ամբողջությամբ լուծված է ինչպես կենտրոնում,այնպես էլ մյուս բնակավայրերում:

Համայնքը միավորումից հետո ձեռք է բերել 15 անուն մեքենա-մեխանիզմ, որոնց միջոցով պատշաճ մակարդակով իրականացվում են աղբահանության, սանիտարական մաքրման և կոմունալ ծառայություններ: Տեխնիկան ծառայեցվում է նաև ներհամայնքային ճանապարհների բարեկարգման ու սպասարկման որակը բարելավելուն, միջհամայնքային տրանսպորտային կապի ապահովմանը և նպաստում է համայնքում այգեգործության զարգացման խթանմանը:

Դավիթ Առաքելյանը Ջերմուկի կոմունալ սպասարկման ավտոպարկի մեխանիկն է. նա է համակարգում վերջերս ձեռք բերված տեխնիկայի սպասարկումը:

«Մինչ այս ունեցած տեխնիկան շատ վատն էր, աշխատանքն էլ շատ վատ էր ստացվում: Նոր տեխնիկայի ձեռքբերումից հետո շատ են ակտիվացել և՛ գարաժի, և՛ համայնքի գործերը»,- ասում է Դավիթ Առաքելյանը:

Տեխնիկան համայնքին է պատկանում, և օգտվել կարող է յուրաքանչյուր բնակիչ: Ինչպես նշում է Դավիթ Առաքելյանը, կարիքը լինելուն պես, անհրաժեշտ տեխնիկան ուղարկում են Հերհեր, Կեչուտ, Գնդեվազ:

Դեպի Հերհեր տանող ճանապարհը

Հերհերն ու Կարմրաշենը Ջերմուկ համայնքի կենտրոնից ամենահեռու գտնվող բնակավայրերն են, այնտեղ տանող ճանապարհները մինչ համայնքների միավորումն ուղղակի անանցանելի էին՝ հատկապես տեղումնառատ ամիսներին: Այսօր անգամ ներբնակավայրային ճանապարհներն են բարձր որակի ասֆալտապատված:

Հարություն Սիմոնյանը Հերհերի բնակիչ է: Նա կարծում է, որ փոքր բնակավայրերի վրա Կառավարության՝ վարչատարածքային բարեփոխումների ծրագիրը բավականին դրական է ազդել:

«Չգիտեմ՝ մյուսների համար ոնց, բայց մենք շահել ենք էդ գործընթացում,- ասում է Հարություն Սիմոնյանը:- Ամբողջ գյուղի ճանապարհները շատ ահավոր էին: Հիմա, փա՛ռք աստծո,ամբողջությամբ ասֆալտապատ են, նույնիսկ գյուղի մեջ որոշ հատված»:

Միավորումից հետո Հերհերում շատ աշխատանքներ են արվել, ինչը նախկինում անհնար էր համայնքի փոքր բյուջեով:

«Մեր բյուջեով ոչինչ հնարավոր չէր լինի անել, ու լավ է, որ մեզ միացրեցին Ջերմուկին: Ջերմուկի բյուջեն մեծ է, հնարավորությունները՝ լա: Ամենակարևորը՝ խմելու ջրի հին ցանցերը փոխեցինք, հիմա ձմեռվա սեզոնին ջուրը 3-4 լիտր ավելացավ»,- բնակավայրի հաջողություններով կիսվում է Հարությունը:

Հերհեր բնակավայրի մեկ այլ բնակիչ Մխիթար Ղամբարյանը ներկայացնում է Ջերմուկ համայնքի հետ միավորումից հետո իրենց բնակավայրում արված բարեփոխումները: Նրա համար հատկապես հատկանշական են ջրի խնդրին տրված լուծումներն ու վարչարարական հարցերը:

«Ջուրն անկորուստ է հասնում մեզ, էկոլոգիապես անարատ է: Իսկ ոռոգման ցանցի հետ ընդհանրապես խնդիրներ չունենք»,- ասում է Մխիթարը:

Համայնքների միավորման արդյունքում բնակավայրերի բնակիչների՝ վարչարարության հետ կապված հարցերը լուծվում են տեղում՝ **Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի** և տվյալների միասնական շտեմարանի շնորհիվ:

Բնակավայրի վարչական ղեկավարն ու ՀԿՏՀ օպերատորը տրամադրում են անհրաժեշտ տեղեկանքները, գանձում հարկերն ու տուրքերը: Մխիթարը գոհունակությամբ է պատմում բնակավայրում մատուցվող ծառայությունների որակի ու արագ սպասարկման մասին.

«Որ պահին մարդկանց հարմար է, կարող են տեղում՝ բնակավայրում, վճարել գույքահարկը, հողի հարկը, տեղեկանք ստանալ: Այդ հարցերը տեղում կարգավորվում են, ոչ մի խնդիր չկա»:

Ջերմուկ համայնքում գործում է Գերմանիայի կառավարության աջակցությամբ հիմնված Քաղաքացիների սպասարկման գրասենյակը, որը Հայաստանի համայնքներում հիմնված առաջին գրասենյակներից է: ՔՍԳ նպատակն է «մեկ պատուհան» սկզբունքով քաղաքացիներին բարձրորակ ծառայություններ մատուցելը, քաղաքացու և համայնքապետարանի միջև առավել թափանցիկ ու մատչելի հաղորդակցություն ապահովելը:

2019 թ-ից ի վեր Գրասենյակն իրականացնում է նաև պետական ծառայությունների գործառույթներ, օրինակ՝ պետռեգիստրի, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության, կադաստրի, ոստիկանության կողմից տրամադրվող ծառայությունների մատուցման գործառույթը. ընդհանուր առմամբ՝ ավելի քան 60 գործառույթ:

ՔՍԳ-ում քաղաքացին մոտենում է ընդունարանի սեղանին, բարձրաձայնում այն ոլորտը, որին առնչվում է իր հարցը, և ուղղորդվում է համապատասխան մասնագետի մոտ

Արմեն Հակոբջանյանը Ջերմուկ համայնքի բնակիչ է: Նրան հանդիպեցինք Քաղաքացիների սպասարկման գրասենյակում, ուր նա հաճախ է այցելում.

«Քաղաքապետարանից միշտ ստանում եմ ինձ հետաքրքրող հարցերի պատասխանները՝ ճիշտ ու դրական»:

Մեսրոպ Հարությունյանը Գնդեվազ բնակավայրի օպերատորն է: Նա է ապահովում իրենց բնակավայրի բնակիչների կապը համայնքապետարանի հետ:

«ՀԿՏՀ ծրագրի ներդրումից հետո բազան դարձել է ընդհանուր, տեղեկանքների բոլոր ձևերը համայնքների համար նույնն են, հասանելի են և ուսուցողական: Հիմա մեր համայնքում մտածում են գործարկել համայնքի ղեկավարի հետ սկայպով կապ հաստատելու տարբերակը, որպեսզի բնակիչներն այդ կերպ կարողանան ներկայացնել իրենց խնդիրները համայնքի ղեկավարին՝ առանց կենտրոն գնալու»,- ասում է Մեսրոպ Հարությունյանը:

Նա մեզ պատմեց, որ իր հարազատ բնակավայրում՝ Գնդեվազում, կատարվել են բարեկարգման աշխատանքներ, ասֆալտապատվել և լուսավորվել է բնակավայրը, ջրագծերն են նորոգվել, մշակույթի տունն է վերանորոգվել: Այսօր այդ բնակավայրի բյուջեն միացվել է միավորված համայնքի բյուջեին, և բարեփոխումներն արդեն միացյալ բյուջեով են արվում:

«Վերջերս շահագործման է հանձնվել Գնդեվազի վերանորոգված մանկապարտեզը՝ նախատեսված 40-50 երեխայի համար»,- ասում է Մեսրոպը:

Ջերմուկ համայնքի (խմբ.՝ նախկին) ղեկավար Վարդան Հովհաննիսյանն է

Համայնքի (խմբ.՝ նախկին) ղեկավար Վարդան Հովհաննիսյանը քաջատեղյակ է համայնքի խնդիրներին ու անավարտ գործերին, իսկ հարազատ համայնքի հաջողություններով նա միշտ հպարտանում է և լուծումներ է փնտրում այն ավելի բարեկարգելու ուղղությամբ: Իր համայնքում նա տեսնում է գյուղական զբոսաշրջության զարգացման հեռանկար.

«Ջերմուկը տուրիստական քաղաք է, և գյուղական համայնքներին շոգեքարշի պես ներգրավել է գյուղական տուրիզմի զարգացման հարցում: Մենք պատմամշակութային հիանալի կոթողներ ունենք, օրինակ՝ Գնդեվազում ու Հերհերում: Գնդեվազում նախատեսվում է կառուցել 1500-1600 մ երկարությամբ լուսավորված ճեմուղի՝ կահավորված նստարաններով, որը պետք է միացնի Գնդեվազ գյուղն ու վանական համալիրը: Եթե տուրիստական հոսքն անցնի գյուղի միջով, գյուղն ավելի կզարգանա»:

Իսկ Ջերմուկ բնակավայրում բարեկարգվել է դեպի հայտնի ջրվեժ տանող ճեմուղին:Այն ամբողջությամբ լուսավորված է, կահավորված նստարաններով և հնարավորություն է ընձեռում ինչպես զբոսաշրջիկներին, այնպես էլ տեղացիներին վայելելու չքնաղ բնությունը և զբոսնելով հասնելու դեպի համայնքի այցեքարտը՝ Ջերմուկի ջրվեժը:

Ջերմուկի ջրվեժ տանող բարեկարգված ճեմուղին



Ջերմուկի ջրվեժ

Կեչուտ բնակավայրի «Զատիկ» մանկապարտեզն է

Բարձր մակարդակով կահավորվել և անհրաժեշտ պարագաներով համալրվել է Ջերմուկի «Զատիկ» մանկապարտեզի Կեչուտի մասնաշենքը, ինչպես նաև՝ նույն մանկապարտեզի Ձմեռային այգին, որի բարեկեցիկ պայմանները հնարավորություն են տալիս սաներին իրենց բակային բնույթի խաղային ժամանցը կազմակերպել այդ այգում:

Ցողիկ Հովհաննիսյանը Կեչուտ բնակավայրի բնակիչ է: Հատուկ սիրով է իր երեք թոռներին բերում մանկապարտեզ. ժամանակին այս նույն ճանապարհը նա անցնում էր իր երեխաների հետ: Այսօր ամեն ինչ շատ է փոխվել, մանկապարտեզը նորոգվել ու բարեկարգվել է:

«Մենք շատ գոհ ենք մեր մանկապարտեզից, մեր դաստիարակներից: Մանկապարտեզում ոչ մի հին բան չկա, ամեն ինչ նոր է: Ունենք արվեստի դպրոց, որտեղ գործում են պարի, երգի և նկարչության խմբակներ»,- ասում է տիկին Ցողիկը:

Կեչուտում սկսվել է նաև բակերի և ներբնակավայրային ճանապարհների բարեկարգման, բակային խաղահրապարակների ստեղծման աշխատանքների իրականացումը, ասֆալտապատվում են բնակավայրի փողոցները, վերակառուցվում են փողոցներին կից մայթերը, մայթեզրերն ու աստիճանները:

Մանկապարտեզի ձմեռային այգու բարեկեցիկ պայմանները հնարավորություն են տալիս սաներին ձմեռվա ամիսներին բակային ժամանցի ակտիվ խաղերն ապահովել այստեղ

Ջերմուկ համայնքի պատանիները, երիտասարդներն ու ակտիվ կենսակերպով ապրող բնակիչներն օգտվում են այնպիսի մարզադպրոցից, որ երազանք է թվում շատ զարգացած համայնքների համար՝ կահավորված արդիական մարզասարքերով և անհրաժեշտ մարզագույքով: Մարզումների, տարբեր խաղերի և ֆուտբոլի համար Ջերմուկում կա նաև հրաշալի մարզադաշտ, որը գրավում է ոչ միայն տղաներին, այլև՝ աղջիկներին: Իսկ վերջին շրջանում համայնքի ֆուտբոլի տղաների և աղջիկների հավաքականները մեծ հաջողություններ են գրանցում:

Արդիական մարզասարքերով և անհրաժեշտ մարզագույքով կահավորված Ջերմուկ համայնքի մարզադպրոցը



Ջերմուկ համայնքում ամբողջությամբ լուծվել է գիշերային լուսավորության հարցը. ամենուր կարելի է տեսնել LED լուսարձակներ և բոլորից տարբերվող, հոյակերտ գիշերային լապտերներ: Հիմնանորոգվում է համայնքապետարանի շենքը, վերանորոգվել են հանդիսությունների սրահը, ինչպես նաև Ջերմուկ բնակավայրի մանկապարտեզն ու խաղահրապարակը:

Ջերմուկի ֆուտբոլի դաշտը, որտեղ մարզվում են համայնքի տղաներն ու աղջիկները, իսկ վերջերս երկուսի հավաքականներն էլ գրանցում են մեծ հաջողություններ

Ջերմուկի մանկապարտեզն ու խաղահրապարակը, ինչպես նաև հանդիսությունների սրահը

Ջերմուկի ճոպանուղին է՝ երկարությունը 1000 մ: Այն գտնվում է ծովի մակերևույթից 2480 մ բարձրության վրա

Ջերմուկ միավորված համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը համայնքների միավորումը զարգացման միակ ճիշտ ուղին է համարում.

«Գյուղական համայնքների համար շատ ավելի հեշտացել է աշխատանքը: Ե՛վ վարչական ղեկավարները, և՛ գյուղացիները գիտեն, որ ցանկացած աշխատանք հնարավոր է իրականացնել, որովհետև համայնքը հզոր է: Նախ համայնքի բյուջեն է քառապատկվել, հետո աշխատավարձերն են բարձրացել, բացի այդ համայնքը բոլորի մասին հոգ է տանում, ընդառաջում է ուսանողներին ուսման վարձով, որպեսզի լավ սովորեն և վերադառնան իրենց համայնք»:

Վարդան Հովհաննիսյանի ժպիտը հիմնավորվում է ապագայի մասին իր պատկերացումներով: Նա ասում է, որ այսօր էլ տեսնում է իր ղեկավարած համայնքի վաղվա օրը, որը **«վստահաբար շատ լավն է լինելու»**:

Սարապատ

Սարապատ միավորված համայնքը գտնվում է մայրաքաղաքից 140 կմ հեռավորության վրա՝ Շիրակի սարահարթի կենտրոնական մասից դեպի հյուսիս-արևելք:

Համայնքի տարածքը հիմնականում ալիքային սարահարթ է, արևելյան սահմանը եզրափակվում է Ցողասարի լեռներով, որոնք Բազումի լեռների արևմտյան ճյուղավորումներից են, իսկ հարավում՝ Շիրակի լեռներով: Բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1800-2200 մ:

Սարապատ միավորված համայնքը ձևավորվել է 2016 թվականին (մինչ 2021 թվականի տարեվերջ՝ վերամիավորվելով Աշոցք համայնքի հետ)՝ իր մեջ ներառելով Թորոսգյուղ (կենտրոն), Արփենի, Բաշգյուղ, Ձորաշեն, Գոգհովիտ, Հարթաշեն, Հողմիկ, Կաքավասար, Լեռնագյուղ, Մուսայելյան, Փոքր Սարիար, Սալուտ, Սարապատ, Ցողամարգ և Վարդաղբյուր բնակավայրերը: Մշտական բնակչությունը մոտ 3,700 մարդ է, հիմնական զբաղմունքը՝ անասնապահություն, այգեգործություն, մեղվաբուծություն:

Ի դեպ, մինչ պատրաստում էինք այս նյութը, Սարապատ միավորված համայնքը վերամիավորվեց Աշոցք միավորված համայնքի հետ 2021 թվականի վերջին: Նյութի պատրաստման ուսումնասիրություններն ու հարցազրույցներն իրականացվել են 2021 թվականի ընթացքում:

Սարապատ համայնքին շատ մոտ գտնվում է ՀՀ ամենաբարձր՝ Թռչկանի ջրվեժը, որը 2008 թ-ից մտել է բնական հուշարձանների ցանկ, իսկ 2011 թ-ից տարածքը հատուկ պահպանվող գոտի է համարվում: Սարապատցիները ջրվեժը համարում են իրենց գանձը՝ թեև պաշտոնապես համայնքի կազմի մեջ չի մտնում:



Սարապատ բնակավայրն է

2016 թվականին որդեգրվեց միավորված համայնքի բնակավայրերի հավասարաչափ զարգացման քաղաքականություն, և արդեն միասնական բյուջեի շնորհիվ համայնքապետարանը կարողանում է լուծել տարբեր բնակավայրերի խնդիրները՝ ըստ առաջնահերթության:

Սարապատ համայնքի կենտրոն Թորոսգյուղն է

Սարապատ համայնքում, որտեղ հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է, շատ կարևորում են տեխնիկայի ձեռքբերումը, որը մեծ օգուտ էր համայնքի բնակիչներին: Նրանք մինչև միավորումը սեփական միջոցներով անհատներից էին վարձակալում անհրաժեշտ տեխնիկա անգամ բնակավայր բերող ճանապարհը մաքրելու համար:

Բարեկարգվել են հանդամիջյան ճանապարհները

Միավորման արդյունքում՝ տեխնիկայի ձեռքբերման շնորհիվ, հնարավոր եղավ կառուցել դաշտերը միացնող կամուրջները՝ այսպիսով հեշտացնելով հողագործությամբ զբաղվող գյուղացիների գործը:

«Նախկինում մի դաշտից մյուսը հասնելու համար պետք է երեք դաշտով պտտվեինք, որ տեղ հասնեինք, իսկ հիմա շատ է հեշտացել, ընդամենը մեկ րոպեում կանցնենք-կհասնենք»,- ասում է Սալուտ բնակավայրի բնակիչ Վահան Մինասյանը:

Սուբվենցիոն ծրագրով ձեռք բերված գրեյդերն է

Նա հավելում է, որ իրենց գյուղը նախկինում նորմալ տեխնիկա չի ունեցել: «Ամբողջ Շիրակի մարզում տեխնիկայից ամենախեղճը մեր գյուղն է եղել: Էն ժամանակ էլ, որ բաժանել են, մեզ նորմալ տեխնիկա չի հասել»,- ասում է Վահանը:

Իսկ այժմ օրվա ցանկացած ժամին կարող են համայնքապետարանից վերցնել տեխնիկան և բացել ճանապարհները հատկապես ձմռան ամիսներին, երբ ձնածածկի պատճառով ճանապարհներն անանցանելի են լինում:

Սալուտի բնակիչ Վահան Մինասյանն է: Նա համայնքի ակտիվ բնակիչներից է, ով ջանք չի խնայում համայնքի բարեկեցությանը նպաստելու համար:

Նկարում նա օգնում է վերանորոգել իր բնակավայրի վարչական շենքը:

Սալուտի վարչական շենքը տասնամյակներ անց առաջին անգամ է վերանորոգվում: Նույն շենքում է գտնվում նաև բնակավայրի դպրոցը:

«Հակակարկտային կայանները տեղադրվել են անցյալ տարի և անմիջապես գործարկվել են, իսկ արդյունքը հստակ տեսնում ենք»,- ասում է համայնքի (հեղ.՝ նախկին) ղեկավար Արտուշ Մանուկյանը:

Հողագործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակմամբ զբաղվող բնակավայրերի համար կենսական նշանակություն ունեն հակակարկտային կայանները: Կառավարության սուբվենցիոն ծրագրով համայնքում տեղադրվել է արդեն ութ հակակարկտային կայան:

Միավորման արդյունքում համայնքի կենտրոն Թորոսգյուղում Գերմանիայի, ԱՄՆ և Շվեյցարիայի կառավարությունների ցուցաբերած աջակցության շնորհիվ հիմնվել է Քաղաքացիների սպասարկման գրասենյակը, որը միասնական տեղեկատվական համակարգի շնորհիվ՝ «մեկ պատուհան» սկզբունքով, բարձրորակ ծառայություններ է մատուցում համայնքի բնակիչներին:

Սարապատի Քաղաքացիների սպասարկման գրասենյակը

Շարվիկ Պետրոսյանը վարչական ծառայություններ ստանալու նպատակով այցելել է Քաղաքացիների սպասարկման գրասենյակ

Շարվիկ Պետրոսյանը Թորոսգյուղի ակտիվ բնակիչներից է, որը շատ է սիրում հայրենի բնակավայրը և ներգրավված է տարատեսակ ծրագրերում: Նա արդեն իր ապագա անելիքն է հստակեցրել. որոշել է ֆերմա հիմնել և հույս ունի, որ հաջողելու է: Իսկ սպասարկման գրասենյակ էր այցելել՝ հարկերը վճարելու:

«Սպասարկումն այստեղ շատ լավն է, գրասենյակի աշխատակիցների միջոցով շատ հեշտ են իրականացվում տեղեկանքների, հարկերի հարցերը: Ես միշտ այստեղից դրական նոտայով եմ դուրս գալիս: Շատ գոհ եմ»,- գրասենյակի բարեհամբույր աշխատակիցների և մատուցվող ծառայությունների վերաբերյալ իր տպավորություններն է ներկայացնում Շարվիկ Պետրոսյանը:

Քաղաքացին այլևս ստիպված չէ գնալ սենյակից սենյակ, մոտենալ համայնքի ղեկավարին, այլ իր հարցերի պատասխանը կարող է անմիջապես ստանալ սպասարկման գրասենյակում:

Բնակիչներին ծառայությունները մատուցվում են նաև առցանց կամ տվյալ բնակավայրի օպերատորի միջոցով:

Սարապատ համայնքի աշխատակազմի քարտուղար Համլետ Ավետիսյանը

«Բնակիչն այս սենյակից էլ չի բարձրանում ղեկավարի մոտ, հետո՝ տեղակալի մոտ, իր հարցի պատասխանը ստանում է այս սենյակում և գնում: Թե՛ ժամանակի խնայողություն է, թե՛՝ գումարի, իսկ այլ բնակավայրից բնակիչն էլ կարիք չունի երեսուն կիլոմետր քշել-գալու այստեղ և այդքան էլ հետ գնալու զրոյական տեղեկանք ստանալու համար: Այն կարող է ստանալ անմիջապես իր բնակավայրում»,-

ասում է Համլետ Ավետիսյանը՝ Սարապատի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը, որը նաև համակարգում է Քաղաքացիների սպասարկման գրասենյակի աշխատանքները:

Սասուն Հարությունյանը Ձորաշեն բնակավայրի օպերատորն է: Նա նշում է ներդրված միասնական տեղեկատվական համակարգի հարմարավետությունը. բնակիչը չի գնում համայնքապետարան, այլ անհրաժեշտ ծառայությունը ստանում է իր բնակավայրում, իր տան հարևանությամբ լուծում իր խնդիրները: Նրա կարծիքով՝ համակարգը նաև ունի շատ կարևոր՝ հակակոռուպցիոն նշանակություն:

«Մշակվել է շատ պրոֆեսիոնալ ծրագիր, որը թույլ է տալիս ժողովրդին հետևել իրենց գրած դիմումների ընթացքին, համայնքի ցանկացած իրադարձության՝ ավագանու նիստերին, մասնակցել հանրային քննարկումներին. համայնքային կայքը բաց է»,- ասում է Սասունը, ում համար համայնքային կայքը տեղեկատվական կարևոր աղբյուր է համայնքային իրադարձություններին հետևելու համար:

Սասուն Հարությունյանը՝ Ձորաշենի իր աշխատասենյակում, որտեղ առկա են անհրաժեշտ համակարգն ու տեխնիկան համայնքի բնակչին վարչական ծառայություններ մատուցելու համար

Որպես համայնքի բնակիչ՝ Սասունը նաև պատմեց իրենց բնակավայրի խնդիրների և դրանց լուծումների մասին: Օրինակ՝ գարնանը՝ ջրի ճնշման բարձր լինելու դեպքում, խողովակները պայթում էին, և օրեր շարունակ դրանք հնարավոր չէր լինում վերանորոգել:
«Նախկինում բնակչությունից էինք գումար հավաքում, որպեսզի տեխնիկա վարձակալենք, վառելիք առնենք, իսկ խոշորացումից հետո համայնքն ունի սեփական տեխնիկան, որը տրամադրում է մեզ, և մեկ օրվա մեջ կարողանում ենք խնդիրը լուծել: Երկրորդ կարևոր բանը, որ կուզեմ շեշտել՝ ճանապարհների ընտիր բարեկարգումն է: Եթե առաջ երեք-չորս տարին մեկ էին փոսալցման աշխատանքներ կատարում, հիմա՝ տարեկան երկու-երեք անգամ: Նույնը ձմռանը. կարող է օրերով փակ լինեին ճանապարհները, իսկ հիմա չկա տենց բան: Եթե տեսնում ես ճամփան փակ է, զանգում ես, գալիս բացում են»,- ասում է Սասունը:

Արտուշ Մանուկյանը վստահ է, որ համայնքի միավորման արդյունքում սկսված բարեփոխումները կհասնեն իրենց տրամաբանական ավարտին, իսկ եթե նաև որոշակի ներդրումներ արվեն, ապա համայնքը լրջորեն կզարգանա

Համայնքի (հեղ.՝ նախկին) ղեկավար Արտուշ Մանուկյանն իրենց համայնքի պարագայում դրական է գնահատում միավորումը. «Եթե Հարթաշեն բնակավայրը պետք է իրականացներ արոտների ջրարբիացման ծրագիր իր միջոցներով, պետք կգար մոտ տասը տարի: 2016 թ-ի վերջում մենք արդեն վեց միլիոն ներդրում էինք կատարել, իսկ 2017 թ. ընթացքում յոթ միլիոն տրամադրվել է Հարթաշենի ճանապարհն ու կամուրջները վերակառուցելուն: Դրա մասին 130 բնակիչ ունեցող Հարթաշենը միայն կարող էր երազել, քանի որ այդ գումարը չի ունեցել»:

Սարապատ համայնքում լուծվել է ջրի խնդիրը: Մարդիկ արդեն տանը կամ բակում կարողանում են օգտվել ծորակից հոսող ջրից:

Սուբվենցիոն ծրագրերով ամբողջովին կառուցվել է Ձորաշեն ու Արփենի բնակավայրերի խմելու ջրի արտաքին ցանցը, որը երկրաշարժից հետո կառուցված ցանց էր, և խողովակներն արդեն չէին դիմանում ջրի արագությանը: Այժմ Ձորաշենն ունի շուրջօրյա խմելու ջուր: Խմելու ջրի և ոռոգման համակարգը բարելավվել է նաև Սարապատ բնակավայրում: Իսկ Կաքավաձորում կենդանիների համար տեղադրվել են խմոցներ՝ նպաստելու անասնապահությանը:

Մուսայելյան բնակավայրի զարգացման կենտրոնը

Համայնքում մանկապարտեզներ չկան, կան դպրոցահեն նախակրթարաններ, օրինակ՝ Ցողամարգում, իսկ Մուսայելյանում կա զարգացման կենտրոն, որը տևական ժամանակ դադարեցրել էր գործունեությունը կորոնավիրուսի պատճառով: Թեև համայնքի ղեկավարը նշեց, որ Մուսայելյանում այլընտրանքային նախակրթական ուսուցման հետ կապված նոր, խոստումնալից ծրագրեր կան:

Նունե Հակոբյանը Մուսայելյան բնակավայրի բնակիչ է: Պատմում է, որ իր երեխան մեծ սիրով էր հաճախում նորաբաց զարգացման կենտրոն, քանի որ բնակավայրում մանկապարտեզ չկար, իսկ այսօր համավարակով պայմանավորված՝ այն փակվել է:

«Գյուղում զարգացման կենտրոն դեռ չէր եղել. բացվեց, վերանորոգվեց, հաճախեցին երեխաները, շատ գոհ էինք, բայց շատ կարճ տևեց՝ ընդամենը մի քանի ամիս և փակվեց: Երեխաները շատ առաջ էին գնացել, արդեն պատրաստի դպրոցական էին»,- ասում է Նունե Հակոբյանը:

Մուսայելյանի բնակիչ Նունե Հակոբյանը

Ձորաշենի տներից մեկը

Սարապատ համայնքի բնակիչներն ու ղեկավարը լավատես են համայնքի ապագայի հարցում:

«Տնտեսությունը զարգանալու է, ժողովրդի սոցիալական վիճակը լավանալու է, ըստ այդմ էլ բարեկեցիկ ապագա եմ ակնկալում Սարապատ համայնքի համար»,- ասում է համայնքի ղեկավար Արտուշ Մանուկյանը:

«Ցանկացած գյուղի կամ բնակավայրի ապագան բնակչի ձեռքում է: Ամեն մարդ մեկ քարն էլ մեկի վրա դնի, ապագա կստեղծվի, գյուղն էլ կանգուն կմնա»,- լիահույս է Ձորաշենի Սասուն Հարությունյանը:

Հապավումների ցանկ

ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԳՄՀԸ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն / GIZ
ՀԿՏԿ	Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՇԶՀԳ	Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՀՀ ՏԿԵՆ	ՀՀ տարածքային կառայվարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՔՍԳ	Քաղաքացիների սպասարկման գրասենյակ

Հրատարակված է
Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից

Ընկերության կենտրոնական գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

«**Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում**» ծրագիր
Հանրապետության 59, 6-րդ հարկ
Երևան, Հայաստան, 0010
Հեռ.՝ +374 (0) 10 51 00 61
Կայք՝ www.giz.de

Պատասխանատու՝ **Պիեռ Բոնիֆասի**
Հայեցակարգն ու համակարգումը՝ **Լիկա Մկրտչյանի**
Բովանդակությունը՝ **Դիանա Մարկոսյանի և Լիկա Մկրտչյանի**
Ձևավորումը՝ **Զետտայումեն ՍՊԸ-ի**
Լուսանկարները՝ **Արտյոմ Աղասարյանի**

2022 թ.
© ԳՄՀԸ/GIZ